«Նախահոսպիտալային բուժօգնությունը վնասվածքի դեպքում»

2023 թվականից կրկնողաբար Երևան քաղաքում «Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոն»-ի կողմից կանցկացվի «Նախահոսպիտալային բուժօգնությունը վնասվածքի դեպքում» թեմայով ուսումնավարժական դասընթացը: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ ավագ և միջին բուժաշխատողներ: Մասնակիցներին շնորհել ՇՄԶ 9 տեսական և 12 գործնական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարել 093177717 հեռախոսահամարով:

ԾՐԱԳԻՐ

«ՆԱԽԱՀՈՍՊԻՏԱԼԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍՎԱԾՔԻ ԴԵՊՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոն», Տիտոգրադյան փ.14, «Էրեբունի» բժշկական կենտրոն)

«Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոն»

Օր 1		
09:00-11:00	**Դասախոսություն** Վնասվածքի նախահոսպիտալային բուժօգնության ոսկե սկզբունքները, նախապատվությունները, կրիտիկական մտածողությունը: Էթիկան: Վնասվածքի կինեմատիկան: Դեպքի վայրի կառավարումը	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
11:00-13:00	**Դասախոսություն** Վնասվածքով տուժածների զննումը և կառավարումը. 1. Առաջնային զննում /XABCDE/ 2. Երկրորդային զննում /SAMPLER/ 3. Դեպքի վայրում անհրաժեշտ բուժօգնություն 4. Կապի հաստատում 5. Տեղափոխում	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
13:00-14:00	Ընդմիջում	
14:00-17:00	**Գործնական աշխատանք** Շնչուղիներ և շնչառություն: Վնասվածքով տուժածների շնչուղիների անցանելիության խանգարման հիմնական պատճառները, կլինիկական արտահայտությունները: Շնչուղիների և շնչառության զննման հմտությունները: Շնչուղիների անցանելիության ապահովման եղանակները. բազային հնարքներ, բերան-ըմպանային և քիթ-ըմպանային օդատարներ, շնչուղիների արտածծման	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա

	հարմարանքներ և եղանակներ, վերկոկորդային շնչուղիների տեղադրում, շնչափողի ինտուբացիա, շնչափողի միջմաշկային կաթետերավորում, կոնիկոտոմիա: Արհեստական շնչառության իրականացման եղանակներ: Շնչառության արդյունավետության հսկողություն: Շնչուղիների և շնչառության կառավարում երկարատև տեղափոխման դեպքում	
Օր 2		
09:00-11:00	**Դասախոսություն** Շոկ: Ախտաֆիզիոլոգիան, դասակարգումը, գնահատումը: Շոկի կառավարումը /XABCD/: Բարդությունները: Երկարատև տեղափոխումը	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
11:00-13:00	**Գործնական աշխատանք** Արտաքին արյունահոսության դադարեցման եղանակները. ուղղակի ճնշում, ճնշող վիրակապ, հեմոստատիկների կիրառում, լարանի տեղադրում: Ներերակային և ներոսկրային մուտքի ապահովում	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
13:00-14:00	Ընդմիջում	
14:00-15:00	**Դասախոսություն** Գանգուղեղային և ողնաշար-ողնուղեղային վնասվածքներ: Ախտաֆիզիոլոգիան: Ձննումը: Կառավարումը մասնավոր վնասվածքների ժամանակ /XABCD/	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
15:00-17:00	**Գործնական աշխատանք** Պարանոցի ձեռնային անշարժացում: Պարանոցային օձիքների տեղադրում: Պացիենտի տեղափոխում պատգարակին կանգնած, գետնին երեսնիվայր և երեսնիվեր դիրքերից: Պացիենտի անշարժացում պատգարակին: Տուժածի դուրսբերում մեքենայից: Մեքենայից դուրսբերում սահմանափակ ռեսուրսներով /«անակոնդայով»/: Երեխաների անշարժացում	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
Օր 3		
09:00-11:00	**Գործնական աշխատանք** Կրծքավանդակի մասնավոր վնասվածքների կառավարումը: Կրծքավանդակի ասեղային դեկոմպրեսիա: Որովայնի մասնավոր վնասվածքների կառավարումը: Կոնքի կայունացման եղանակները	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
11:00-13:00	**Գործնական աշխատանք** Ոսկրամկանային վնասվածքներ: Վերջույթների անշարժացման միջոցներ և եղանակներ: Ամպուտացված վերջույթի կառավարում: Կրաշ համախտանիշի կառավարում	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
13:00-14:00	Ընդմիջում	
14:00-15:00	**Գործնական աշխատանք** Այրվածքներ: Այրվածքային մակերեսների մշակում և վիրակապման եղանակներ: Աչքերի լվացման տեխնիկա քիմիական այրվածքների դեպքում	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
15:00-17:00	**Դասախոսություն** Վնասվածքի նախահոսպիտալային կառավարումը պեդիատրիկ և գերիատրիկ տուժածների մոտ /XABCD/	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա

Թիրախային լսարան՝ ավագ և միջին բուժաշխատողներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 12-24 հոգի